

2/741

125

ՊՐԻՆՏԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1

ՔՐԻՍՏՈՐԱԿԱՆ

ԳԻՏԵԼԻԲՆԵՐ

ՀՐԱՀԱՆԳ

ՎՈՒՄ ԴԱՇՏԻ ՆԵՏԵԱԿ ԶՈՐՔԻ ԳՈՐ
ՕՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳՐԱԿ

наставление для действий пехоты № 600

Փարսորինգ փորագրի

ՅՈՎԻՆ ՄՏԻՓՈՒՆՆԱՆ

Կ Ի Ֆ Լ Կ Ի

Տպարան «ՀԵՄԱՏՈՒՐ» Գորով. 39

1918

ԳՐԱՆ Է 20 ԿՈՊ.

„ՌԱԶՄԻԿ“-ի



300
1714-20

№ 1

ՋԻՆՏՈՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

356
2-63

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈՒԻ ԴԱՇՏԻ ՇԵՏԵԱԿ ԶՕՐՔԻ ԳՈՐ-
ԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ I

Наставление для действий пѣхоты въ бою.

Փոխադրեց պարուհիկ՝
ՅՈՎԱԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԱՇԽԱՏԱԻՈՐ» Գորով. 39.

1918


2010

ԵՐԿՈՒ ԽՕՄՔ

Որքան գիտեմ հայոց զրականութիւնը չու-
նի ռազմագիտութեան վերաբերեալ և ոչ մի
աշխատութիւն: Իր հոգու փրկութեան համար
հայը շատ աղօթքներ, սաղմոսներ, շարականներ
և ժամագրքեր է կազմել, անգիր արել, սակայն
չի մտածել ունենալու իր կեանքը պաշտպանե-
լու տարրական գիտութիւն: Թող չկարծեն, թէ
ես ուզում եմ միլիտարիզմը խրախուսել և
զարգացնել. շատ լաւ գիտեմ, որ հայը շնորհիւ
իւր աշխարհագրական-քաղաքական հանգամանք-
ների երբէք էլ չի կարող միլիտարիստ լինել.
Կուզենայի, որ միայն հայը կարողանար պաշա-
պանել իր պատիւը, կեանքը և աշխատանքը:
Սյդ նպատակով էլ ես կազմեցի այս փոքրիկ
գրքոյիւր, փոխադրելով ուսուերէնից, որպէսզի
աշխատաւոր հայ ժողովուրդը գիտենայ իր գը-
լուխը պահելու կերպը, երբ նա կուի մէջ ընկ-
նի իր կամքի հակառակ, ինչպէս շատ յաճախ է
պատահել:

2002

Յովակ Ստեփանեան



1442Գ-59

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

1. Կուի դաշտում գլխաւոր դերը խաղում
է հետևակ զօրքը (պեխօտա). զօրքերի միւս
տեսակները պէտք է բոլոր միջոցներով օգնեն
հետևակին՝ ռազմական նպատակներին հասնելու
համար և ծանր բռպէին փրկեն նրան:

Փոխադարձաբար և հետևակը պիտի զոհո-
ղութեան գնով միւս տեսակի զօրքերին օգնու-
թեան հասնէ:

2. Հետևակ զօրքի ոյժը կուի դաշտում
հանդիսանում է՝ վճռական շարժողութեամբ ա-
ռաջ մղուող հրացանային և գնդացիրային կրակը,
ինչպէս և՛ սւինամարտը:

3. Կուի համար հետևակ մասերն ընդու-
նում են մարտական կարգ (բօևօյ պօրեադօկ):

Վաշտի (բօտա) մարտական կարգը բաղ-
կացած է շղթայի քառորդ վաշտային (վզվօդնիյ)
շրջաններից և վաշտային պահեստից (բեզերվ):

Գումարտակի (բատայիօն) մարտական կար-
գը— վաշտային մարտական շրջաններից եւ զու-
մարտակային պահեստից:

Handwritten notes and stamps at the bottom right.

Գնդի (պօլկ) մարտական կարգը—գումարտակային մարտական շրջաններից եւ գնդային պահեստից:

Յրիգադայի մարտական կարգը բազկանում է մարտական շրջաններից եւ ըրիգադային պահեստից, ընդ մին մարտական շրջանները կարող են նշանակել գնդեր եւ գումարտակներ:

Դիւիզիայի մարտական կազմը կազմւում է մարտական շրջաններից (ուր կարող են մտնել բրիգադաներ, գնդեր, երբեմն մինչև անգամ գումարտակներ) և դիւիզիայի պահեստից:

Գործողութիւնների նպատակի, կռի գարգացման աստիճանի և հանգամանքների շնորհիւ՝ վաշտի մարտական կարգում կարող է չլինել վաշտային պահեստ, ինչպէս և գումարտակի, գնդի, բրիգադայի և դիւիզիայի մարտական կարգում կարող են չլինել մի քանի աստիճանների պահեստներ կամ օգնական զօրքեր:

4. Իւրաքանչիւր մարտական շրջան՝ իրեն յանձնւած մասնաւոր ինդիւրը կատարելու ընթացքում պէտք է միաժամանակ այնպէս դործէ, որ հեշտանայ կռիւ ընդհանուր և միակ նըպատակին հասնելու:

5. Իւրաքանչիւր մարտական շրջանի մարտական կարգի վերածելու ժամանակը և տեղը

կախւած է այդ մարտական շրջանի գործողութիւնների մասնաւոր նպատակից և հանգամանքից:

Իւրաքանչիւր մարտական շրջանում և պահեստի վայրում (բեզերվ) գործադրուող զօրակազմերը (ստրոյ) պիտի համապատասխանեն թշնամու հեռաւորութեանը, նրա կրակի ընդլթին և տեղի առանձնայատկութիւններին:

6. Կռի ընթացքում ամեն մի առաջնորդ մեծ ուշազրութիւն պիտի դարձնէ, որ իրեն ենթարկուող զօրամասերը ցոյց տան մէկ-մէկու փոխադարձ օգնութիւն կրակի զարգացման և սխիսամարտի, ինչպէս և բոլոր շարժողութիւնների մէջ:

7. Բոլոր առաջնորդները իւրաքանչիւր մի շարժման և գործողութեան ժամանակ պարտաւոր են իրազեկ դարձնելու անմիջապէս իրանց ենթարկուողներին՝ ստեղծւած կացութեան նկատմամբ և առաջադրելու միանգամայն պարզորոշ նպատակներ, որոնց պլտի ձգտել անսլայման հասնել:

8. Առաջնորդի իւրաքանչիւր կարգադրութիւնը կռի մէջ պէտք է լինի նպատակայարմար, այսինքն բնականաբար սլտո բլխէ այն նպատակից, որ առաջնորդը մտադրել է և իր ժամանակին

յանձնարարել: Այդ անհրաժեշտ է անպայման նրա համար, որպէսզի կարգադրութիւնը պատահական բնաւորութիւն չ'կրէ, իսկ կատարումը ստանայ յաջողութեան համար հարկաւոր դիմացկունութիւնը:

9. Ամեն մի մարտիկ, ամենաքարծր առաջնորդից մինչեւ ամենահասարակ զինտրը՝ պէտք է իր սրբազան պարտքը համարէ դրած նպատակին հասնելը՝ ինչ էլ ուզում է լինի, ուրք չըղարծնելով ոչ մի դժարութեան եւ կորստի վրայ:

Դրած նպատակին հասնելու ամենալաւագոյն միջոցն է՝ յարձակողական գործողութիւններին դիմելը: Յարձակողական գործողութիւնները հնարաւորութիւն են տալիս նախաձեռնութիւնը խելիւ թշնամուց և նրան շախշախելու:

Թշնամուն շախշախելու համար, ինչ պայմաններում ուզում է լինի, միշտ պէտք է գործը մինչև վերջը տանելու վճռականութիւնն ունենալ գլխի և սրտի մէջ:

Ամեն մի առաջնորդ պէտք է տոգորւի այդպիսի վճռականութեամբ և ներշնչէ այն իր ստորադրեալներին:

10. Կուի մէջ հետևակ զօրքի բոլոր առաջնորդները պէտք է ուշի ուշով հսկեն իրանց

ստորադրեալների բարոյական վիճակի վրայ, պահպանեն նրանց մէջ յարձակողական թռիչքը և դրած նպատակին հասնելու վճռականութիւնը:

Սպաները պէտք է անսահման քաջութեան և հոգու արիւթեան անձնական օրինակ դառնան:

11. Բոլոր առաջնորդները պէտք է ցոյց տան կուի մէջ մասնատր նախաձեռնութիւն, այսինքն գործեն իրանց պատասխանատուութեամբ, երբ տեսնում են, որ դրած նպատակին հասնելու համար հանգամանքից կախած հաւանական տւեալներ կան:

12. Հետևակ զօրքի ո՞ր և է մասի ձեռք բերած յաջողութիւնը պիտի օգտագործեն և լրացնեն հարևան զօրամասերը՝ առանց սպասելու գլխաւոր պետերի կարգադրութեան:

Յաջողութեան օգտագործման և զարգացման ամենալաւ եղանակն այն է, երբ հարևան զօրամասերը դիմում են վճռական գործողութիւնների:

13. Հետևակ զօրքի ամեն մի առաջնորդ պիտի գտնւի իր զօրամասի գործողութիւնների շրջանի այն տեղում, որտեղից աւելի յարմար է կառավարելու իրեն եւ թարկւող զօրքերին, հնար

եղած չափով անձամբ հսկելու նրանց գործողութիւններին, ինչպէս և հետևելու թշնամու և հարևան գորքերի շարժումներին:

Իւրաքանչիւր զինուորական պետի տեղը միշտ ստոյգ պիտի իմանան նրան ենթարկւողները. պետի տեղափոխութեան ամեն մի դէպքում նրա ստորադրեալներն անմիջապէս պիտի իմանան այդ մասին:

Կուի վճռական ընպէսներին առաջնորդն այնտեղ աիտի լինի, որտեղ նրա ներկայութիւնն աւելի անհրաժեշտ է, որպէսզի իսկոյն և եթ գորքերի գլուխն անցնէ և նրանց ոգևորէ իր անձնական օրինակով:

14. Իւրաքանչիւր առաջնորդ կուի մէջ պիտի կազմակերպէ մարտի դաշտի դիտողութիւնը՝ յատուկ դիտողների միջոցով, զրանցից ամեն մէկին ցոյց տալով իր դիտողութեան սահմանները:

Դիտողներին ուղարկելով, առաջնորդները միջոցներ պիտի ձեռք առնեն, որ նրանցից արագ կերպով տեղեկութիւններ ստացնեն:

Անկախ այդ դիտողներից (նարիւղատելի), ամեն մի ռազմիկ կուի մէջ պէտք է աշտուրջ կերպով հետևէ, թէ ի՞նչ է կատարւում թշնամու կողմում և անյապաղ պիտի հազորդէ իր

մերձաւոր պետին այն բոլորը, ինչ որ նկատւում է:

15. Ուրիշ շրջանների հետ առնչութիւն չունեցող մարտական շրջանների, ինչպէս և օգնական կամ պահեստի զօրամասերի պետերը (նաչալնիկ) պարտաւոր են դիտողութեան տակ առնել թեքը (Ֆլանգ) և թիկունքը՝ ուղարկելով այդ նպատակով ձիաւոր կամ հետևակ պահակախմբեր (գաստուա) կամ թէ առանձին հսկողներ (դօզօր). բացի դրանից պահեստագորքի պետերը պարտաւոր են դիտելու անձամբ կամ յատուկ դիտողների օգնութեամբ, թէ կրուող զօրամասերում ի՞նչ է տեղի ունենում, որպէսզի հարկաւոր դէպքում որոշ խնդիրներ վճռելու ժամանակ կուրօքէն չգործեն:

16. Ո՛չ ոք և ոչ մի պաաճառով, առանց թոյլաւութեան իր պետի՝ իրաւունք չունի թողնելու կուի ժամանակ իր մարտական կարգի այն տեղը, ուր նշանակւած է նա: Չի կարելի նմանապէս տեղից բացակայել մարտական կարգի մէջ՝ վիրաւորներին տեղափոխելու համար, որպէսզի կուող զօրամասերը չթուլանան:

Վիրաւորներին տեղափոխելու համար յատուկ բեռնակիրներ կան:

17. Կուի մէջ կարող են իրար հետ խառ-

նւել մի քանի զօրամասեր. այդպիսի գէպքերում պէտք է նշանակելի դրանց համար մի ընդհանուր պետ, եթէ այդպիսին նշանակւած չէ, ապա ուրեմն ամենից աւագը ներկայ եղող պետերից պէտք է անմիջապէս իր վրայ առնէ խառնւած զօրքերի մարդկանց կառավարելու ղեկը: Այդպիսի ընդհանուր պետը որքան կարեւր է շուտ պիտի վերահանգնէ կարգը, բաժանէ խառնւածներին՝ մարդկանց թւի համեմատ որոշ մասերի և ըստ այն էլ նշանակէ ներկայ եղող սպաներին և ենթասպաներին.

18. Բոլոր պետերը պարտաւոր են պահպանելու ամուր կապ ճակատի և թիկունքի մասերի միջև: Կապը այն է, որ պետերը իրազեկ են դարձնում իրար ինչպէս իրենց զօրամասերի գործողութիւնների ընթացքի, այնպէս և թշնամու շարժողութիւնների, այլ և տեղի մասին:

19. Կապ հաստատելը՝ իրար հետ նոնշուրթին ունեցող պետերի փոխադարձ պարտակալութիւնն է:

20. Վարտային մարտական շրջանում քառորդ վաշտերի պետերի և վաշտապետի, ինչպէս և վաշտերի իրար հետ ունեցած կապը գլխաւորապէս սահմանւում է զբօշակների ազդանշանների օգնութեամբ, որի համար առաջուց հաս-

տատւում են զբօշակներով արտայայտուող մի քանի նշաններ: Բացի դրանից, կապակցութեան համար կարող են ծառայել պահակները, հսկողները, հեռախօսը և ուրիշ միջոցներ, նայած հանգամանքներին: Շղթայի մէջ (ցեպ) յարմար է, որ տեղեկութիւնները և կարգադրութիւնները մէկ-մէկու հաղորդեն կարգով իրենք գինւորները: Քառորդ վաշտերի պետերի և հարևան վաշտերի պետերի ազդանշաններն ընդունելու, ինչպէս և ազդանշաններ հաղորդելու համար՝ վաշտապետը նշանակում է իր մօտ եղած մարդկանցից, ըստ հնարաւորութեան հէնց նրանց, ովքեր հետևում են թևերն ուղարկւած հսկողների ազդանշաններին:

Գումարտակային մարտական շրջանում վաշտապետների և գումարտակապետների միջև եղած կապը հաստատուում է՝ պահակների, հսկողների, առանձին մարդկանցից կազմւած շղթայի, նմանապէս զբօշակներով տրուող ազդանշանների, հեռախօսի և ուրիշ միջոցների օգնութեամբ, նայած տեղին և հանգամանքին:

Գումարտակապետը պարտաւոր է ունենալու իր մօտ ազդանշաններ ընդունողներ, որոնք կրհագորդեն և նրա ազդանշանները:

Գնդային մարտական շրջանում գումարտա-

կապետներին և գնդապետի միջև կապ է պահպանուում նոյն միջոցներով, ինչ որ գումարապետը կային մարտական շրջանում:

Հեռախօսով կապ պահպանելու ժամանակ հաղորդարարի գործածութիւնը անտեսելու համար օգտակար է կենտրոնական կայարան ունենալ, որի միջոցով կարող է տեղի ունենալ իրար հետ կապակցւող պետերի հաղորդարգրութիւնը:

21. Բոլոր զինւորական պետերը պարտաւոր են ուշադրութեամբ և բարեխղճօրէն ուսումնասիրելու այն տեղը, վայրը, ուր պէտք է կատարւեն ռազմական գործողութիւններ. աչքաթող չպիտի արւեն նոյն իսկ աննշան խորտ ու բորտութիւնները և տեղումը գտնւող շնչին առաքիւնները՝ իրանց առանձնայատկութիւններով, որպէսզի դրանցից կարելի լինի օգտւել՝ կրակն աւելի ներգործական դարձնելու և թշնամուն գաղտնի կերպով, յանկարծակի մօտենալու համար:

22. Կռի մէջ հետևակ զօրքը պիտի միջոցներ ձեռք առնէ, որ թշնամու կրակը քիչ կորուստներ պատճառէ:

Կորուստը պակասցնող միջոցներն են՝ վրձակահուրթիւնը և յարձակման դիմելու հնարաւոր արագութիւնը, իւր ներգործական կրակի

զարգացումը, թշնամու կրակի ընդթիւն և առանձնայատկութիւններին, ինչպէս և տեղին յարմարելը:

Կարող է պատահել, որ այս բոլոր միջոցները գործադրելուց յետոյ էլ անկարելի լինի թշնամուն մօտենալ. այդպիսի դէպքում քիչ կորուստ ունենալու համար աւելի նպատակայարմար է առաջ շարժել մութն ընկնելուն պէս:

Մտակայն մտաւնայու չէ, որ թշնամու կրակից քիչ կորուստ ունենալու հոգսը կռի նպատակին հասնելուն ի վտառ չպիտի գործադրի:

23. Մարտական կարգում իւրաքանչիւր զօրամասի տեղին յարմարելը՝ թշնամու դիտողութիւնից ծածուկ մնալու և նրա կրակից քիչ կորուստ ունենալու նպատակով՝ կազմում է նոյն զօրամասի պետի անմիջական պարտականութիւնը:

24. Շղթայի մէջ գտնւող զինւորների տեղին յարմարելը վերապահուում է իրենց՝ օղակի (զվենօ) տարածութեան շրջանում. մի տասնեակի կամ առանձնեակի (օտդելենիէ) օղակները շղթայի մէջ պիտի գտնւեն իր տասնապետի ձեռքի տակ, իսկ մի և նոյն յիսնեակի քառորդ վաշտի (վզօդ) բոլոր տասնեակները՝ իւր յիսնապետի ձեռքի տակ:

25. Հետևակը ինքնորոյն կերպով կուի գաշտում պիտի գործադրութեան մէջ գնէ զինւորական ճարտարագիտութիւնը կամ ինժեներական արհեստը՝ տեղական խոչնդոտների, առաջխաղացման ճանապարհին պատահող արգելքների վերացման, նմանապէս իր կրակի ներգործութիւնն ուժեղացնելու համար:

Բոլոր գորապետները, ինժեներական աշխատանքները սկսելու կարգադրութիւնն անելով՝ պիտի հաշւի առնեն հետևակի ոյժը և այն հանգամանքը, որ ինժեներական աշխատանքի գործադրութիւնը չթուլւոցնէ յարձակողական թափն ու վճռականութիւնը:

Այն էլ ասեմ, որ գորքերը պիտի նախօրօք վարժւած լինեն խրամատներ փորելու՝ իրանց պաշտպանութեան համար:

I ՀԵՏԵՒԱԿ ԶՕՐԻՒ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹԻՒՆԸ

26. Հետևակը իւր առանձնայատկութիւնների շնորհիւ կարող է հետախուզութեան ենթարկել թէ թշնամուն և թէ շրջապատը՝ կէս տարածութեան հեռաւորութեան վրայ՝ (до полуперехода) առաջաւոր մասերից հաշւած:

Հետևակային հետախուզութեան մասերի 4—5 վերստից աւելի հեռանալու դէպքում՝ նը-

րանց պաշտպանութեան համար օգտակար է ուղարկել առաջ փոքրիկ հետևակային մասեր (քառորդ վաշտեր, կիսավաշտեր), որոնց ցանկալի է տալ հաղորդելու տեխնիքական միջոցներ ինչպէս օրինակ հեռախօս, ինքնաշարժ, հեծանիւ կամ մի քանի ձիաւորներ:

27. Եթէ հետախուզութեան գնացած հետևակի առաջից հեծելագորքն է հետախուզութիւն (разведка) կատարում, ուղարկւած այդ նպատակով վաղօրօք թշնամուց աւելի հեռու գտնուող տարածութիւնից, ապա, առնասարակ, որքան մեր հետևակը մօտենում է թշնամուն, այնքան էլ հեծելագորքի հետախուզող մասերը աստիճանաբար խմբւում են հետևակի թևերում՝ վերջիններիս խորքերը և թշնամու թիկունքը հետախուզութեան ենթարկելու նպատակով: Դրա համար, որպէսզի նման դէպքերում, երբ հետախուզող ձիաւորները գիմում են դէպի թշնամու թևերը՝ հետախուզութիւնը նրա ճակատում չընդհատւի և չթուլանայ, հետախուզող հետևակ գորամասերը պիտի այնքան վաղաժամ դուրս եկած լինեն, որ իր ժամանակին կարողանան իրանց վրայ վերցնել և ըստ ամենայնի կարգաւորել հետախուզութիւնը ճակատում և թշնամու թևե-

րի այն վայրերում, ուր հեծելազորքը չի կարող հետախուզութիւն կատարել:

28. Հետախուզութեան համար ուղարկում են հետեակից հետախուզող հսկողներ եւ խմբեր, որոնք գործում են անշատ կամ հետեակ մասերի պաշտպանութեամբ:

Հսկողները մեծ մասամբ հետախուզում են որոշ ուղղութեամբ կամ որոշ կէտեր. խմբերին յանձնարարում են թշնամու ուղղութեամբ որոշ ճակատի, շրջանի կամ անցի հետախուզութիւնը:

29. Իբրև հսկողներ և խմբերին մասնակցողներ նշանակում են գլխաւորապէս իսկական հետախուզողներ, միայն հակառակ դէպքում այնպիսի զինւորներ, որոնք աւելի ընդունակ են այդ գործի մէջ:

Բերգեր և ամրութիւններ հետախուզելու դէպքում հետեակի հսկողներին և խմբերին տրւում են սապօրներ (խրամատ փորող) և թընդանօթածիզներ. բացի դրանից այդպիսի դէպքերում կարող են սապօրներից ուղարկել յատուկ հսկողներ:

Ոչ-մասնագէտ հետախուզողներից կազմած խմբերի և հսկողների պետեր են նշանակում ենթասպանները կամ թէ իսկական հետախուզողները, կարևոր դէպքերում աւելի օգտակար է



նշանակել իբրև պետեր հսկողներին և ենթասպաններին, մանաւանդ երբ հսկողները և խմբերը կազմած են իսկական հետախուզողներից:

Իւրաքանչիւր խմբի և հսկողի ոյժը պիտի համապատասխանէ՝ տրւած խնդրին, այն տարածութեանը, որ նրանք անցնելու են և սպասուող զեկուցումների (донесение) քանակին:

Հսկողներին և մանաւանդ խմբերին կարելի է տալ հազորդելու տեխնիքական միջոցներ՝ ինքնաշարժներ, հեռախօս կամ ձիււորներ:

Գրքեր

30. Ձեկուցումներն արագութեամբ տեղ հասցնելու համար՝ հսկողները և խմբերը կարող են իրենց նախաձեռնութեամբ սահմանել միջանկեալ պահակներ: Եթէ խմբերը և հսկողները պաշտպանում են հետևակ մասերով, այդ դէպքում հէնց այդ մասերն են դնում միջանկեալ պահակներ: Վերջիններիս տրւում են հազորդելու տեխնիքական միջոցներ, այսինքն ինքնաշարժներ (самокатчики) և ձիււորներ:

31. Իւրաքանչիւր հետախուզող հսկողի, խմբի և օգնող մասի պետին տրւում է որոշ խնդիր. բացի դրանից նրան յայտնւում են՝

1) Եղած տեղեկութիւնները թշնամու մասին.

2) Անհրաժեշտ տեղեկութիւններ մեր զօրքերի մասին.

3) Ո՛րև և հրտեղ ուղարկել զեկուցումները, երբ ուղարկել շաապողական զեկուցումները.

4) Տեղեկութիւններ հարեան հետախուզող հսկողների, խմբերի և օգնող զօրամասերի վերաբերեալ.

5) Եթէ հարկաւոր է, ապա երբ, հր ժամին պիտի տեղ հասցնել ամենակարևոր տեղեկութիւնները.

6) Ո՛րը վերադառնալ կամ ի՛նչ անել տրւած խնդիրները կատարելուց յետոյ:

Հսկողների, խմբերի և օգնող մասերի պետերին յայտնուում է նմանապէս, եթէ անհրաժեշտ է, բայց անսլայման բերանացի կերպով այդ հետախուզութիւնը ձեռնարկող պետի մտադրութիւնն ապագայ գործողութիւնների նկատմամբ:

32. Իւրաքանչիւր հսկողի և խմբի հետախուզութեան գործը կազմակերպում են իրենց պետերը՝ առաջադրւած խնդրի սահմանաշրջանում:

33. Հետախուզութեան համար դուրս եկած խումբը ուղարկում է յառաջ հետախուզող հրահողներ. մի և նոյն ժամանակ օգտակար կլինի,

եթէ պետը, այդ խմբի առաջնորդը, հսկողներից յետ մնայ մի քանի մարդկանցով, որպէսզի աւելի յարմարութիւն ունենայ ղեկավարելու հետախուզութիւնը:

Երբ խումբը հետախուզութեան է ենթարկում անառիկ և դժարանցանելի վայրերը, փրնտրում է ներս թափանցելու ուղիները, երբեմն օգտակար է լինում կազմելու նօսր շղթաներ եղած հսկողներից (ամեն մի շղթայում 2—3 մարդ), որոնք առաջ դիմելով ուսումնասիրում են միանգամից այդ տարածութեան կամ վայրի որոշ շերտը:

34. Հետախուզող հսկողները, ինչպէս առանձին գործողները, այնպէս և խմբից ուղարկւածները՝ հետախուզութեան նպատակին մօտենում են ծածուկ ճանապարհներով, բայց այնպէս, որ միաժամանակ անարգել կերպով կարողանան կատարել անհրաժեշտ դիտողութիւնները:

35. Առանձին գործող հսկողների և խմբերի գլխաւորները ուղարկում են զեկուցումներ այն պետին, որ կազմակերպել է հետախուզութիւնը կամ նրան, որին մատնացոյց կանեն:

Եթէ հսկողները և խմբերը պաշտպանւած են հետակ զօրամասով, այն ժամանակ հսկողների և խմբերի պետերն իրենց զեկուցումները

ուղարկում են օգնող կամ պաշտպանող այդ գործամասի պետին. վերջինս ստացած գեկուցումները ժողովում է, կարգի բերում և ուղարկում ըստ պատկանելոյն:

36. Հետախուզող հսկողները և խմբերը կուի են ըննում, ընդհարում, երբ այդ անհրաժեշտ է հետախուզութեան նպատակին հասնելու համար:

Հետևակ օգնող գործամասերը պիտի նեղեն թշնամու առաջ խաղացած մասերին, որպէսզի հսկողների և խմբերի գործողութեան շրջանը լայնանայ, հնարաւորութիւն տրւի դրանց թափանցելու թշնամու բանակ դրած տեղի խորքերը և ընդգրկելու հետախուզութեան նպատակը հէնց թեքի կողմից, այլ և նրա համար, որ թշնամու հետախուզութեանը հակադռն:

II ՀԵՏԵՒԱԿ ԶՕՐԲԻ ՇԵՐՈՒՄՆԵՐԸ ԿՈՒԻ ՄԷՁ.

37. Ամեն մի շարժողութիւն կատարելուց առաջ պէտք է պարզորոշ լինի՝ շարժման նպատակն է ընդհանուր ուղղութիւնը, իսկ խոշոր գործամասի համար՝ շարժողութեան սահմանաշրջանը:

Շարժման ուղղութիւնը և սահմանաշրջանը կարելի է մատնացոյց անել քարտէզի վրայ կամ տեղումն գտնուող առարկաներով:

Ընդհանուր ուղղութեան համապատասխան՝ իւրաքանչիւր մի աւելի փոքր գործամասին մատնացոյց է արւում նրա շարժման ուղղութիւնը դէպի առջևում ընկած պարզ նկատելի տեղական առարկան՝ այնպէս, որ բոլոր գործամասերի շարժումը կատարւի ընդհանուր ուղղութեան զուգընթաց: Եթէ հնարաւոր չէ տեղական առարկայ մատնանշելը, ապա ուրեմն ուղղութիւնը պիտի որոշել այլ միջոցներով.— ճանապարհի կամ անտառի երկարութեամբ, հարևան գործամասից աջ կամ ձախ և այլն, նմանապէս կողմնացոյցով (КОМПАСС):

Երբ առաջխաղացման ուղղութիւնը հնարաւոր չէ որոշել տեղական առարկայով, այդ դէպքում պէտք է նշանակել ուղղութիւն տուող գործամաս, որ յաճախ կարող է տեղի ունենալ, երբ շարժում են փոքր գործամասեր:

38. Շարժման ժամանակ չպէտք է թոյլ տալ, որ մասերը իրարից խզեն, կարեն կամ իրար խառնեն: Իրա համար ամեն մի գործամասի պետ ուշադրութիւն պիտի դարձնէ, որ իրեն յանձնւած գորքը տրւած ուղղութեանը հետևէ ճշտօրէն, իսկ շեղելու դէպքում առանց յետաձգելու պարտաւոր է ուղղել:

39. Առաջխաղացման ժամանակ պէտք է

յարմարել այն վայրին, որտեղով գորքն է անցնում, այլ և թշնամու կրակին:

Այդ պայմանների համապատասխան էլ պիտի ընդունել առաջխաղացման եղանակներ և զորաշարքեր:

40. Յրիւ զորաշարք—расыпной строй— (կրակոզ շղթայ) գործ է ածուում այն ժամանակ, երբ շարժումը կամ բանակ դնելը որոշ վայրում տեղի է ունենում թշնամու հրացանային կրակի ազդեցութեան շրջանում:

Բացած զորաշարք (развернутый строй) —իր բոլոր ձևափոխութիւններով—գործադրում է պահեստի մասերում, նմանապէս երբ շարժումը կամ բանակ դնելը տեղի է ունենում թշնամու թնդանօթային կրակի տակ և հրացանային կրակի ազդեցութեան շրջանում՝ որպէսզի կրակի պատճառած զոհերի թիւը կրճատւի, այդ զորաշարքը կարելի է աւելի նօսրացնել և վերջապէս դարձնել միաշարք՝ խիտ կամ նօսր տեսակի:

Ջորասիւնը—քառորդ վաշտերով և կամ առանձնեակներով (по отдѣленіямъ)—թոյլատրելի է պահեստի մասերում, այն էլ այն ժամանակ, երբ նրանք յուսալի կերպով ծածկւած վայրում են գտնուում:

Քառորդ վաշտային կազմը—строй по взводно—օգտակար է գործածել թշնամու հեռաւոր թնդանօթային կրակի տակ, երբ զորամասը շարժում է կամ բանակ դնում. դրա գործադրութեան յաջողութիւնը պահանջում է, որ քառորդ վաշտերի պետերը միանգամայն ինքնուրոյն կերպով այս կամ այն կազմն ընդունեն, նայած տեղին և թշնամու կրակին:

Գումարտակի պահեստի զորասիւնը—резервная колонна батальона—գործ է ածուում թշնամու կրակի ազդեցութեան շրջանից դուրս:

Վաշտային կազմը—строй по ротно—գործ է ածուում պահեստի մասերում՝ թշնամու կրակի ազդեցութեան շրջանում բանակ դնելու և շարժելու ժամանակ. այդպիսի դէպքում թշնամու կրակի պատճառած զոհերի թիւը կրճատելու և հակառակորդի դիտողութիւնից ծածկւելու համար՝ կարելի է փոփոխել ամեն մի վաշտի կազմն ու շարքը, շարքերի և վաշտերի միջև եղած հեռաւորութիւնը և առհասարակ գոյութիւնն ունեցող վաշտային դասաւորութիւնը:

41. Հետևակ զորքի տեղափոխութեան եղանակները կուլի մէջ հետևեալներն են.—վաշտերի մէջ շղթաներն առաջ են դիմում քայլերով կամ վազելով՝ քառորդ վաշտերով, առանձնեակներով,

օղակներով եւ մէկ-մէկ, որոնք անցնում են մի գիրքից միւսը՝ շղթաները հաւաքելով նոր գիրքերի վրայ:

Պահեստի զօրքերը յառաջ են դիմում պահանջած ուղղութեամբ, դարձեալ քայլելով կամ վազելով՝ միանգամից ամբողջ պահած զօրքը կամ նրա մասերը, այսինքն էլի քառորդ վաշտերով, առանձնեակներով (отдельностями) և մէկ-մէկ մարդկանցով, անցնելով մէկ թագստաւորանից միւսը, հաւաքւելով ծածկւած նոր վայրերի յետևում:

42. Վազելը զխատրապէս գործադրում է թշնամու ներգործող, անուիջական կրակի տակ:

Եթէ գիրքերի միջև ընկած տարածութիւնը մեծ է, այն ժամանակ պէտք է վազել ընդ միջուկներով, մի փոքր կանգ առնելով, որպէսզի հնարաւոր լինի հանգստանալ և չզառնալ թշնամու կանոնաւոր և երկարատև նշանի առարկան:

Բաց տարածութեան վրայ վազել կարելի է միջին թւով 100 քայլ:

Եթէ առաջխաղացման շրջանում հանդիպում են մի շարք յարմար գիրքեր, որոնք իրար մօտ են, որպէսզի առաջխաղացումը աւելի արագ ընթանայ՝ կարելի է զըմանցից մի քանիսը բաց թողնել:

Ուժեղ կրակի տակ, մանաւանդ երբ թշնամին մօտ է, յաճախ աւելի օգտակար է լինում սողալով առաջ գնալը:

43. Առաջխաղացման ժամանակ իւրաքանչիւր զօրամաս պիտի հոգայ և այն մասին, որ ինքը չխանդարէ միւս զօրքերին՝ կրակ բաց անելու թշնամու վրայ:

44. Հետեակ զօրքի մասերի բոլոր շարժումների ժամանակ՝ համապատասխան կերպով շարժւում են և թևերի և թիկունքի պահակներն ու հակողները:

ՀԵՏԵՒԱԿԻ ԶՕՐԱՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԿՈՒՒ ՄԷՁ

45. Ամեն մի զօրաշարժման (մանեօվը) նպատակն է՝ հետեակ զօրամասը ղնելու ամենապատասխան զրութեան մէջ՝ տուած խնդիրը վճռելու հասար:

Նպատակին հասնելու համար՝ շարժումը պէտք է համապատասխան ուղղութիւն ստանայ, կատարւի գաղտնի, այս կամ այն զօրակազմը գործ ածւի նայած տեղին և թշնամու կրակին, իսկ օրւայ որոշ ժամանակը և եղանակը օգտագործւի նպատակայարմար կերպով:

46. Որոշ ուղղութեան հաստատ հետեւողութիւնը՝ հետեակ մասի զօրաշարժի յաջողութեան պիտար պայմանն է:

Թևով դէպի թշնամին շարժելուց պէտք է ամեն կերպ խուսափել, մանաւանդ այն զօրամասերում, որոնք թշնամուց հեռու չեն. այդպիսի շարժումները պիտի փոխարինել շուրջանակի շարժումներով, առաջ ուղղելով մարտական կարգի խորքից որոշ զօրամասեր:

47. Գաղտնի զօրաշարժին նպաստում է առաւելապէս գիշերը:

48. Շարժման ուղղութեան փոփոխութիւնը կուի մէջ անհրաժեշտ է կատարել որքան կարելի է արագ և այնպէս, որ այդ ժամանակ կրակը չը թուլանայ և ուղղութեան փոփոխութիւնը կատարելի հնարաւորութեան չափով թշնամու համար աննկատելի կերպով: Շարժման ուղղութեան փոփոխութեան դէպքում պէտք է մատնացոյց անել ուղղութիւն տւող զօրամասը:

49. Երբ զօրամասը արշաւում է դէպի թշնամին ճակատ առ ճակատ և մի փոքր հնարաւորութիւն է ստանում անցնելու թշնամու թիկունքը թևերի կողմից՝ չպէտք է դանդաղել այդպիսի դէպքում:

Այդ հնարաւորութիւն է տալիս կողմնակի կամ շեղակի, իսկ երբեմն էլ աւելի յաջող պայմաններում ուղղակի կամ շեշտակի հրաձգութեան, որին ենթարկւում է թշնամին. բացի

պրանից թիկունքն անցնող զօրամասը կարող է գրոհ տալ թշնամու վրայ և հարւածել նրան ախնով աւելի մահացու և վտանգաւոր ուղղութեամբ:

50. Թիկունքն անցնող զօրամասերն առաջուց պէտք է որոշեն, թշնամուն մօտենալուց առաջ. այդ զօրամասերը առաջ ցցելով թշնամու համար աննկատելի կերպով՝ պէտք է փոխեն շարժման ուղղութիւնը այնքան, որ կարողանան պաշարել, անցնել թիկունքը, ապա և վճռական յարձակման դիմել:

Թիկունքն անցնել այն զօրամասերով, որոնք առաջ են մղւում պահեստից կամ մարտական շրջանների զօրամասերից, թշնամուց ոչ հեռու տարածութեան վրայ՝ դժւար է, բայց և այդ դէպքում, եթէ տեղը և հանգամանքը նւազաստում են, պէտք է ձգտել անցնելու թշնամու թիկունքը՝ առջևում գործող զօրամասերի սեփական նախաձեռնութեամբ, և մինչև անգամ օղակներով, եթէ շատ ոյժեր չկան:

51. Հետևակ մասերի զօրաշարժումները կատարւում են դաշտային ծառայութեան կանոնի 477—485 յօդուածներով:



ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

«ՌԱԶՄԻԿ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԵՏԵՒԵՍԼ ԳՐՔԵՐԸ

№ 1. Հրահանգ կուրիաշտի հետևակ
գործի գործողութիւնների համար: Փո-
խադրութիւն պարուչիկ Յ. Ստեփանեա-
նի գինն է — 50 կ.

№ 2. Հետևակ գորակագրի կանոնա-
գիրք: Թարգմ. պրապ. Լ. Լիսիցեա-
նի գինն է 1 ը. —

№ 3. Հայկական գործի զիսցիպլինար
կանոնագիրք (ռուսերէն) իրատ. Հ. Ս. զգ.
Խորհրդի գինն է 1 ը. —

ՀԱՅ ԶԻՆՒՈՐՍԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1. Վ. Խորէնի—Ի՞նչ է ժողովրդ-
դական Հասարակապետութիւնը գինն է — 40 կ.

№ 2. Է. Պիմենովա—Մշտական Զօրք
և ժողովրդական Միլիցիա. Թարգմ.
Ռուստոն. գինն է — 20 կ.

Այս բոլոր գրքերը վաճառոււմ են «Ռազմիկ»-
ի խմբագրատան Գоловинский пр. № 17. Հայ
Զինուորական Խորհուրդ:

2013

«Ազգային գրադարան»



NL0049345

1/2/11

12